

**Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ն  
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆՆ Է**

**ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԳԼԿՈՒՆ  
ՏԵՍԱՆԵԼԻ ՄԱՐՄԻՆԸ**

**THE CHURCH IS THE BODY  
OF INVISIBLE JESUS CHRIST**

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ  
ԳԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ  
2001**

Գահիրե, 12 Մեպտեմբեր 2001

Մեծայարգ  
Տիար Ալպէն Նորատունկեան  
Թորոնթօ

Միրելի բարեկամ,

Գոհունակութեամբ և խոր շնորհակալութեամբ, գանազան ծրարներով ստացած եմ ձեր հոգեգրած ֆանուլթ գրֆոյկները:

Այս գրֆոյկներէն իւրաքանչիւրը գրուած է ռեւէ հայ ֆրիստունեայի համար վերին աստիճանի հետաքրքրական նիւթի մը մասին: Ինչպէս օրինակ, Աստուածաշունչ Մատեան, Աւետարան ըստ Մատթէոսի, Սուրբ Մարկոսի Աւետարանի խորհրդածութիւնը, Հրաշափառ Յարութիւնը, Մի Լայք, Ջի չէ Մեռեալ, Այլ Ննջէ, ներշնչում և Յայտնատեսութիւն, Եկեղեցին Հայկական, Սուրբ Պատարագի Նախերգութիւնը Տէրունական Աղօթք, Եւլն:

Ներկայ ժամանակին, լրատուական միջոցներու առատութեան շրջանին, հրապարակի վրայ և բոլորին հասողութեան մէջ է ամէն տեսակ գրականութիւն: Բայց դժբախտաբար ջատ սակաւ է հոգեւոր գրականութիւնը: Եղածն ալ մարդիկ չեն կարդար, դժբախտաբար նաեւ Սուրբ Գիրքը չեն կարդար: Կարելի է ըսել հոգիի սով է: Մարդ արարածը վերածուած է homo economicus-ի: Կեանքը վերածուած է վազֆի և հեւֆի: Նիւթական ճոխութիւն, հաճոյք, կենսասիրութիւն, անձնասիրութեան հետ, հոգեւոր արժէքները մղած են երկրորդ կամ երրորդ բլանի վրայ: Ուրեմն ձեր գրֆոյկները ուսուցանող իրենց հանգամանքով, հասկնալի ոճով, ջինջ ու մաքուր հայերէնով, հոգեշահ և Աստուածահաճոյ: Գրֆոյկները Կանթեղալոյս անուամբ հրատարակութեան շարք մըն է, հաւանաբար մինչեւ ֆառասուն վեց տարբեր նիւթերու մասին գրուած, անվճար բաժնուող, հոգեւոր ուսուցման և ջինութեան գրֆոյկներ:

Այս կապակցութեամբ կ'ուզեմ ձեզի յայտնել գնահատանքս: Կը ցաւիմ որ աւելի կանուխ չկրցայ գնահատանքս յայտնել որը կը խորհիմ կրնայ նաեւ Բաջալերական ըլլալ ձեզի: Թէեւ դուք կարիքը չունիք ոչ գնահատանքի ոչ ալ Բաջալերութեան: Ծատերը ընտրեալ անօթներ են որոնք Աստուծոյ խօսքը, պատգամը մարդոց մատուցանելու առաքելութիւնը ունին և ասիկա կոչում մըն է: Բոլոր կանչուածները չեն, այլ ընտրեալները, ինչպէս գիտենք:

Առ այս, թող բարին, մարդասէր ու ողորմած Աստուած վարձահատոյց ըլլայ ձեզի:

Ծնորհակալութեամբ, հիացմամբ և բարեկամական սիրով կը մնամ հայցելով Աստուծոյ օրհնութիւնը ձեր վրայ:

Աղօթարար

Զաւէն Արֆեպսկ. Զ.  
Առաջնորդ Հայոց Եգիպտոսի

# Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆՆ Է

Եկեղեցի, կը նշանակէ հաւատացեալներու հաւաք: Յիսուս ըսաւ Պետրոսի. «Այս վէճիս վրայ պիտի ջիներ, Իմ Եկեղեցիս»: Եկեղեցին շինողը Յիսուս Ինքը պիտի ըլլայ և ոչ ուրիշ ոեւէ մէկը: Ան կ'ըսէ.

**"Ի՞մ Եկեղեցիս"**- Մատթ. ԺԶ. 13-20: «Աստուած Հոգի է ու զԱյն պաշտողները հոգիով և ճշմարտութեամբ պիտի պաշտեն». ըսաւ Յիսուս, ո՛չ թէ մասնաւոր քարաշէն կառոյցի մը մէջէն և ո՛չ ալ հաւաքականութեան մը մէջ, այլ՝ *հոգիով ու ճշմարտութեամբ*.

«Եկեղեցին քարեղէն կառոյց մը ըլլալէ առաջ, Կաթողիկոսական նստավայր մը ըլլալէ ջա՛տ առաջ, ոգեկան ամբողջութիւն մըն է: Մեր ժողովուրդի դարաւոր ու չարչարակոծ պատմութեան խորհուրդն է Յիսուսի Յարութիւնը, որ կանգուն պահած է մեզ ժամանակի ակերներուն ու փոթորիկներուն դէմ ու յակերժութեան ճամբան ցոյց տուած է Հայոց վեհապանծ Ազգութեան»-Գրիգոր Նգրուրեան:

"Եկեղեցին" տառադարձութիւնն է Յուն. ekklesia, բառին որ կը նշանակէ *հաւատացեալներու համախմբումը*, կամ *Աստուծոյ ժողովուրդին համախմբումը*, և այդ իմաստով գործածուած է նաեւ Հին Կտակարանին մէջ: Հետեւաբար Նոր Կտակարանին մէջ գտնուող "Եկեղեցի" բառը կապ չունի պաշտամունքի *վայրին* կամ *ջէնթին* հետ, այլ՝ առհասարակ հաւատացեալներու ամբողջութիւնը կը նշէ-- Մատթ. ԺԶ. 18: Գործք. Ի. 28: Ա. Կորնթ. Ժ. 32, ԺԲ. 28: Կամ Բրիստոնեայ անունը տեղական համայնքի մը տրուած կոչումն է, --Գործ. ԸԼ, ԺԴ 22, Ի.17: Փոխառողը եկեղեցին և անոր սկզբունքները չեն, հապա եկեղեցականը և անոնց **վարդապետութիւնները**:

Այդ Բրիստոնեացունչ մեղեդիներով օծուն միջավայրի հաւատացեալները չէի՞ն արդեօք, որ իմ մանկական հոգին պարուրեցին միաթիֆ յուզականութեամբ, որ պիտի ընկերանար ինծի տարիներ, տարիներ, հանգրուանէ հանգրուան, կեանքիս այլազան ապրումներուն:

«Տիեզերքը տաճար է, և երկինքն է սուրբ սեղան. երկինքն անոր գմբէթն է և իր աստղերն անհամար, Աղօտ զարդերը մթութեան»--Լամարթինի համար տիեզերք եկեղեցի է:

Քաջամարտիկ Պետրոս աջակերտ, նման Յովհաննէս Ակրտիչի, կը խոնարհեցնէ ինքզինք ու կ'ըսէ. «Ին՛՛ւր ալ՝ *այցրո՛ղ* քարերու պէս կը շինուիք իբրեւ հոգեւոր տաճար մը սուրբ քահանայութիւն մը, որպէսզի մատուցանե՛ք հոգեւոր զոհեր Աստուծոյ ընդունելի՛ Յիսուս

Քրիստոսի միջոցով»--Ա. Պետ. Բ.5, Եսայ. 66. 2-3:

Ա. Մաքսիմոս Խոստովանող (580-662) ըսած է. «Սուրբ Եկեղեցին... պատկերն է Աստուծոյ որով Ան կ'իրագործէ հաւատացեալներու միութիւնը: Ինչքան ալ տարբեր ըլլան անոնք նկարագրով, ինչքան ալ տարբեր ըլլան անոնց ապրելատեղն ու կենցաղը, անոնք կը զգան Եկեղեցիով իրագործուած իրենց միութիւնը»: Առանձինն կարելի չէ Եկեղեցի ըլլալ, ինչպէս կարելի չէ ընտանիք ըլլալ:

Ինչպէս որ բազմաթիւ են արեւուն ճառագայթները բայց մէկ է անոր լոյսը, և ինչպէս որ բազմաթիւ են ծառի մը ճիւղերը բայց մէկ է հաստատուն արմատը ուրկէ կը բխի անոր զօրութիւնը. նոյնպէս, թէեւ բազում արուներ կը բխին մէկ աղբիւրէն՝ հակառակ որ անոր բազմութիւնը կը թուի տարածուած ըլլալ ամէն կողմ դէպի յորդառատ ջրհորներ, սակայն իրենց միութիւնը կը մնայ հաստատ, որովհետեւ բոլորն ալ մէկ աղբիւրէ կը բխին՝ Յիսուս Քրիստոսէ:

Պապը ըսած է թէ եպիսկոպոսները, միաբանները ու բահանաները, իրենք են Յիսուսի Եկեղեցին, ու իրենցմէ զատուողը՝ Եկեղեցիէն կը զատուի: Մինչդեռ «Եկեղեցին այն ժողովն է մարդոց, որ Աստուծոյ Խօսքը ունին ու Անով սրբուած են»:

--Մելանկտոն: Ամէն մարդ ինքն իր մէջ Եկեղեցի է և նոյն ինքը՝ բահանայ, իւրաքանչիւր մարմին սուրբ սեղան է և անոնց հոգիները ընդունելի զոհաբերութիւն են Աստուծոյ:

Սուրբ հաւատացեալներու հաւաքականութիւնը Անտեսանելի Գլխուն տեսանելի ներկայացուցիչներն են: Սուրբ Աւետարանի սահմանումով չկայ և չի կրնար ըլլալ «մեր» կամ «ձեր» Եկեղեցին: Ոչ ալ «ազգային Եկեղեցի», որակումը կրնայ շիտակ ըլլալ: Եկեղեցին մէկ է և անոր Տէրը Քրիստոս է: Մեծ Եղեռնին երբ հայեր ախորժեցան անապատ, հոն Եկեղեցի չկար, սակայն իրենք՝ դարձան կենդանի Եկեղեցի, խորան և վկայութիւն: Քրիստոս՝ Իր համբարնալէն անմիջապէս առաջ ըսած էր. «Ինձի համար վկաներ պիտի ըլլաք»: Ի վերջոյ անոնք կենեցին իրենց վկայութիւնը արիւնով և անհակտելի միութեամբ:

***Աշխարհ և Եկեղեցին կը գտնուին իրենց  
զոյամարտի վերջին, թերեւս ամենէն  
ճակատագրական հանգրուանին առջեւ:***

Ուստի «Արձագա՛նգ ըլլանք Աստուծոյ ձայնին, փողահարը՝ Իր կոչին, բարձրաբարբա՛ր կանչը՝ Իր խօսքին, բայց Բաղքրագոյ՛նն է դառնալ ճառագայթը Իր Լոյսին»: Այսինքն մեր ապրումով Արտայայտելու և հաղորդակցելու ենք, Աստուծոյ հետ առանց բառեր

գործածելու՝ աղօթելով: Արտաֆուստ բացայայտելով մեր ներքին սիրոյ բովանդակ գգացումները առ Հա՛յրն Աստուած:

Ինչո՞ւ թափուր են եկեղեցիները: Քանի՞ եկեղեցի յաճախողներ կրնան բացատրել եկեղեցւոյն իսկութիւնը՝ իրենց հաւատքը, ըլլայ ան ապրում կամ բառական լուսաբանութիւն: Հետեւաբար, ջատեր այսօր աւանդական հաւատալիքներէ պատրանաթափ կը խարխաբեն, որոնց պապերը գաղափարի և ազատութեան ջահակիրները եղած էին: Եկեղեցին կանգնած է, որ մոռացութենէ փրկէ հաւատքի արժէքները, սէր, նուիրում և սրբութիւն:

Եկեղեցին Աստուծոյ ներկայութեան գիտակցութիւնն ու հաղորդակցութիւնն է: Եկեղեցին դառնալու է մտքի և խօսքի խորհրդարան, ուր կ'արծարծուի հաւատքի և ապրումի արդի պայքարը: Եկեղեցի կ'երթամ փոխադարձ սիրոյ միջնուորտին մէջ, հայութիւնը և հոգեկան Հայրենիքս գտնելու համար, սակայն եկեղեցիին մէջ ջարուսակ ձգտում մը արկում մը կայ, ըլլալու *հիմնարկութիւն* մը՝ փոխանակ **ջարժման**: Եկեղեցին միայն աւանդեալ հաստատութիւն մը ըլլալու չէ՛, այլ՝ հոգի՛ն կենսաւորող ուժ մը: Եկեղեցին յաճախ կ'ընդդիմանայ իր հարազատ ուժերուն: Եկեղեցիներն ու տաճարները կը ներկայացնեն Աստուծոյ ներկայութիւնը, սակայն "Հոգի՛ Աստուած" կը գերազանցէ՛ նիւթին ներկայութիւնը: Երեւակայական, երազական թոյլէքներու թելադրանք մը չէ՛ ներջնչող սրբութիւնը, այլ՝ Եկեղեցւոյ անդամներու միջեւ անփակտելի կապն է՝ Ա. Հոգին: Ան կը թելադրէ նուաճելու և սիրելու մարդկային սրբազան ձգտումին՝ յաւիտենական կեանքին:

Եկեղեցի մը պարտի ներկայացնել բնագոյին և գգացումին յաւիտենական պայքարը՝ մտածումին ու բանականութեան դէմ: Ան կը տարածուի համամարդկային հորիզոններու վրայ, որովհետեւ ան կեանքը կըռած է առօրեայէն դուրս՝ անհունին և յաւիտենականութեան մէջ: Կրաւորական և ձեռնածալ չէ, միայն երաժշտական հաւաքոյթ մը չէ՛, այլ՝ *գոյածո՛ն* հոգեւոր դարբնոց ուր հաւատքով տկարներ դարձի կու գան ու կը տեսնեն Անտեսանելին ու կը լսեն Անլսելին: Եկեղեցին 2000 տարուայ անկրկնելի ապրող յուշարձանն է: Հաջտարար ու խաղաղարար փրկութեան կամուրջն է ուր հաւատացեալներ Հոգեգրոյց կ'ունենան Աստուծոյ հետ և կը դառնան հոգիով բանաստեղծ և սրտով առաքեալ մարտահրաւերի մը չափ ներգործական զրահ գգեցած ուժ: Եկեղեցին մաքառեցաւ դարեր ջարուսակ, ընդդէմ խաւարի, ընդդէմ բոնութեան և բարբարոսութեան: Բոլորանուէր անձնագրհութեամբ և նահատակութեամբ ան ցոյց տուաւ իր հաւատքը, վստահութիւնը և սէրը առ Աստուած:

Եկեղեցին, մարդկային երկրաւոր կեանքը մտածումի կը փոխէ ու մտածումը սուրբ ապրումի: Եկեղեցիին կազմաւորման համար

վճողորոջ նշանակութիւն ունեցաւ ակնատեսներու և առաքեալներու վկայութիւնը: Արդեօք մենք եւս ունի՞մք ակնատեսի տեսիլքներ, ներշնչելու և վկայելու նոր սերունդին հաւա՛տք ու նուիրում և զանոնք բերելու Յիսուսի երկնագեղ և վեհիմաստ Աւետարանին: Ծաղախա՞ծ ենք մեր անձերը ժողովուրդին ցաւերուն և տխրութեան հետ, կարեկի՞ց ենք թէ խուլ ու կոյր, լուռ և հեռու մնացած ենք ծառայելու գաղութիս կարօտեալներուն: Առանց զոհաբերութեան եկեղեցի չի կերտուիր: Զոհաբերութիւնը միայն դրամական նուիրատրութիւն չի նշանակեր քրիստոնէութեան մէջ, այլ՝ անձնաւորութիւնդ, ծառայութիւնդ և "ես"-դ:

## **Ի՞նչ էր ՅԻՍՈՒՍԻ ՀԵՌԱՆԿԱՐԸ ՀԱՆԳԷՊ ԻՐ ԵԿԵՂԵՑԻՒՆ**

Վերոյիջեալ հարցումը պարտադրուած կ'ընեմ, որովհետեւ Աջխարհի մէջ կառուցուած բոլոր եկեղեցիները որոշուած և անուանուած են կղերականներու կամ հարուստներու հրահանգով: Մինչդեռ Յիսուս որպէս Ճարտարապետը և Սեփականատէրը բոլոր եկեղեցիներուն, սկիզբէն անուանած էր եկեղեցիները, ըսելով. ***Ի՛մ եկեղեցիս:***

Առաքեալները իրենց նամակները, երբեք չուղարկեցին Բաղափի մը մասնաշատուկ այսինչ կամ այնինչ եկեղեցիներուն: Անոնք ուղարկեցին իրենց նամակները և հասցեագրեցին "Հոռմի" եկեղեցիին, "Կորնթոսի" եկեղեցիին, "Եփեսացիներու" եկեղեցիին, որովհետեւ անոնք քաջ գիտէին թէ եկեղեցի ըսուածը, հաւատացեալներու հաւա՛քն է, որ կը պատկանի Յիսուս Զրիստոսի: Պօղոս առաքեալ կը գրէ. *«Եւ Ան (Յիսուս) է գլուխը մարմնին, որ է եկեղեցին. Ան՝ որ սկիզբ է, Անդրանիկը մտնել ներէն, որպէսզի Ինք ըլլայ Առաջինը առէն բանի մէջ»* --Կոր. Ա.18: Ա. եկեղեցւոյ կամարներուն տակ կը սաւառնի միա՛յն աղօթքը: Զրիստոս հիմնեց Աէ՛կ եկեղեցի: Անուանեց զայն *"Ի՛մ եկեղեցիս"*: Զրիստոսի եկեղեցին կը յատկանշուի միութեա՛մբը չոպիւհին:

Սուրբ Հոգին իջաւ ոչ միայն առաքեալներու վրայ, այլ նաեւ ամբողջ եկեղեցիին: Պենտեկոստէին օրը Յիսուսի հաւատացողները քաղաքէն եկեղեցի չունէին, այլ՝ իրե՛նք էին եկեղեցին: Ղուկաս աւետարանագիրը այսպէս կը նկարագրէ Հոգեգալուստը, ըսելով. *«Երբ Պենտեկոստէի օրերը աւարտելու վրայ էին՝ ամենքը միասիրտ, միատեղ էին: Յիսուսի հեռանկարը Իր եկեղեցիին համար, ըլլալ է "Միասիրտ և միատեղ": Սոյն տեսակէտը Յիսուս Զրիստոս նախապէս պատուիրած էր Իր աշակերտներուն ըսելով. «Ըստ պատուիրան կըս*

*տամ ձեռքի, որ սիրե՛ք զիրար. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցե՛ք զիրար: Եթէ դուք զիրար սիրե՛ք՝ առո՛վ ամէնէ՛ր (աշխարհ) պիտի գիտնայ թէ դուք իմ աշակերտներս է՛ք.* --Յով. ԺԳ. 34-35:

Աստուծոյ Որդւոյն աշակերտ ըլլալը Յափշտակութիւն մը, հրճուանք մը տօնախմբութիւն մըն է Յոյսի և գոյատեւման աղբիւր: Բրիստոնէական հաւատքը՝ նոր Կտակարան գիրքէ մը չծլաւ, այլ քրիստոնէական եկեղեցիէ մը, որ ***ապրեցաւ ու քարոզեց Յիսուս Բրիստոսը***: Այսօր բազմաթիւ անձեր կ'ուզեն յաճախել Յիսուսի եկեղեցին, որ ճանչնան իրենց Տէրը Յիսուս Բրիստոսը, այնպէս ինչպէս Յովհաննէս Ակրտիչին աշակերտները եկան Յիսուսի տեսնելու և ճանչնալու սպասուած Մեսիան: Յիսուս Ինքզինքը չյայտնեց անոնց ըսելով թէ Ի՛նքն է Մեսիան, այլ՝ ըսաւ. *«Գացե՛ք պատմեցե՛ք Յովհաննէսին, ինչ որ լսեցի՛ք և տեսա՛ք. կողորդը կը տեսնեն, կողերը կը քաշեն, քրտուները կը մաքրուին, և խուլերը կը լսեն, և մտնել ներք յարութիւն կ'առնեն, և աղֆատներու ն կը քարոզուի Աւետարանը: Երանի՛ր անոր որ իմ պատճառաւ չի գայթակրիր»*: --Մատթ. ԺԱ. 4-6:

Այսօր կան բազմաթիւ յարանուանութիւններ, որոնք իրարու մէջ կը մրցակցին ու կը պայքարին, թէ իրե՛նք են ճշմարիտ եկեղեցին: Ոչ մէկ եկեղեցի մենաշնորհ կամ մենատիրութիւն ունի հաւատքի կամ կոչուելու եկեղեցի եթէ չի ծառայեր մարդկութեան ու չի քարոզեր փրկարար Աւետարանը: Յիսուս եկեղեցւոյ Գլուխը ըլլալով հանդերձ, կ'ըսէ. ***«Գացե՛ք պատմեցե՛ք ինչ որ լսեցի՛ք և տեսա՛ք»***: Ի՞նչ պիտի ըլլայ արդեօք եկեղեցի եկողներուն՝ լսածն ու տեսածները եթէ պատմուին: Սիրոյ ու ծառայութեան գոհաբերութիւնն է, որ պիտի դառնայ Վարակիչ ոյժ մը և յաղթութեան մայրը: Ի՞նչ իմաստ ունի եկեղեցի երթալը և կամ աղօթելը առանց զգալու Աստուծոյ ներկայութիւնը:

"Եկեղեցի" բառը՝ Աւետարաններու մէջ յիշուած է միայն երկու անգամ--Մատթ. ԺԶ. 18 և ԺԸ. 17: Առաջինը աշակերտներուն համար, իսկ երկրորդը բոլոր հաւատացեալներու ժողովին: Պօղոս առաքեալ "եկեղեցի" ըսելով "սուրբերու" հաւաք ըսել կ'ուզէ նոր հաւատացեալներու միաբանութիւն: 25 անգամ "սուրբեր" կը կոչէ եկեղեցւոյ հաւատացեալները Պօղոս առաքեալ: «Եկեղեցի չունինք, սակայն եկեղեցի ենք»: Եկեղեցի չունինք, բայց եկեղեցի ըլլալու առանձնաշնորհումը ունինք: *«Որովհետեւ Բրիստոսի մաս կը կազմենք»*

Եկեղեցի մը երբ մոռնայ կամ անտեսէ Բրիստոսի Աւետարանը ***բացառել***, ան կը դադրի Աստուծոյ եկեղեցին ըլլալէ: Երբ քրիստոնէայ մը սուրբ Աւետարանը իր ետեւը կը թողու, ան կը դադրի մեր Տիրոջը և Քրկչին ճշմարիտ աշակերտը ըլլալէ:

«Զանգի եկեղեցի մեզ ոչ ցուցանէ պատուիրանն Աստուծոյ որ

ի Բարանց է շինեալ, այլ գհաւատով շինեալ զազգս մարդկան ի վերայ վիմին հաստատութեան. ապա ուրեմն ճշմարիտ հաւատն է եկեղեցի, որ գումարէ և շինէ զմեզ ի մի միաբանութիւն գիտութեան Որդւոյն Աստուծոյ»--Ս. Մահակ հայրապետի կանոններուն մէջ (Սոփեր՝ Հայկական, էջ 100-101): Սո՛ւրբ է եկեղեցին. եթէ չուլայ սուրբ՝ կը դադրի՝ հանդիսանալէ Բրիստոսի՝ եկեղեցին: Ան Սո՛ւրբ է իր ծառայութեամբ, սուրբ՝ բարոյականով, սուրբ՝ պաշտամունքով և սուրբ՝ անդամներով:

Մեքենազէն, հիւլէաշարժ, նիւթապաշտ այս դարուն մէջ, միակ հաստատութիւնը, որ կը բարձրանայ, միակ հաստատութիւնը, որուն կատարը չի՛ սասանիր ջաշող մրրիկներէն, Ս. եկեղեցին է Բրիստոսի:

Մատթ. ԺԶ. գլուխին մէջ մեր Տէրը յայտարարեց իր եկեղեցիին նպատակը, բայց չբացատրեց թէ ինչպէ՞ս, ե՞րբ, և ի՞նչ տարրերէ պիտի շինուէր այդ եկեղեցին, և թէ ի՞նչ պիտի ըլլար անոր դիրքը, յարաբերութիւնները, առանձնաշնորհութիւնները կամ պարտակա- նութիւնները:

Պօղոսի գրիչով է որ Աստուած մեզի կը ցուցնէ թէ եկեղեցին *կազմակերպութիւն մը* չէ՝ հապա *մարմին մը*. Բրիստոսի՝ Մարմինը որ Անոր կեանքովը կ'ապրի և երկնաւոր է իր կոչումով, իրեն տրուած խոստումներով և իրեն վիճակուած ապագայ կեանքով:

Եկեղեցին հոգեւոր բուժարան մը ըլլալու է հաւատացեալներու բուժուելու և միասնաբար աճելու ու զօրանալու: Պօղոս առաքեալի յանձնուած էր շնորհի վերաբերեալ վարդապետութիւններուն յայտնութիւնը, որոնց մասին ծածկուած կերպով խօսեցաւ Յիսուս:

Եթէ Բրիստոնեայ հաւատքը նահանջի մէջ կը թուի ըլլալ այսօր, գլխաւոր պատճառը, եկեղեցիներո՛ւ անհաւատութիւնն է: Եկեղեցականներ իրենց Բարոզածը չեն ապրիր ու կը գայթակղեցնեն հաւատացեալները և ա՛յդ պատճառաւ եկեղեցիները թափուր են: Պօղոս նորութիւն չի բերեր, բայց ամէն բան կը բացատրէ օրէնքին, հաւատացեալին արդարացման, սրբացման և փառաւորութեան վերաբերեալ:

## **ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՉՈ՞Ւ ԿԱԼԱԾՈՒԵՑԱԻ**

Պէզան ըսաւ Նաւարրայի թագաւորին (Հիւսիսային Սպանիա): Փոխուողը եկեղեցին և անոր սկզբունքները չեն, հապա եկեղեցականը և անոնց վարդապետութիւնները: «Եկեղեցին իր դատապարտածը ի՛նք սկսաւ ի գործ դնել սկսեալ չորրորդ դարէն: Փոխանակ իր ամբողջ ոյժերը լարելու և Աւետարանի Բարոզութեան ու Բրիստոնէական կրօնի տարածման նուիրելու, միսրճուեցաւ

աստուածաբանական անհատնում վեճերու ճախճախուտին մէջ և մտաւ յունական միտքի ստեղծած նրբաբանութեանց լաբիւրինթոսներուն մէջ, ուրկէ գրեթէ անգամ մըն ալ չկրցաւ դուրս գալ: Փոխանակ մշակելու, արծարծելու և զօրացնելու քրիստոնէական մաքուր կենցաղը և զարկ տալու ընկերային բարեկարգութիւններու, ստեղծեց ու մշակեց պաշտամունքային բարդ ու ծաղկեալ դրութիւն մը, որ թէև մարդկային զգայարաններուն համար գրաւիչ էր և գեղարուեստական մեծ արժէք ունէր, սակայն հետըզհետէ վերածուեցաւ աւելի ձեւականութեան և արուեստականութեան, քան թէ Քրիստոսի պահանջած «Հոգիով և ճշմարտութեամբ» պաշտամունքին, դրութիւն մը, որուն կաշկանդումներէն և կանոնական կապաններէն չի կրնար ազատիլ Արեւելեան Եկեղեցին մինչեւ օրս:

Միալ չէին այս բոլորը, բայց աւետարանական սկզբունքով նախապատուութիւն պէտք էր ընծայել կարեւորներուն՝ բարոյական և հոգեւոր կեանքի քարոզութեան և վկայութեան՝ 4-րդ, 5-րդ և 6-րդ դարերը, մեծ և կարեւոր կրօնական իրագործումներու կողմին, դժբախտաբար դարերն են առաւելաբար կրօնական վեճերու և ժողովներու, որոնց ընթացքին մէկ հատուածը կը բանադրէ և կը նզովէ իր հակառակորդ հատուածը: Այս վիճաբանութիւնները քամեցին յատկապէս Արեւելեան Եկեղեցիի կենսունակութիւնը և ի վերջոյ արժեցին իր կեանքը և գոյութիւնը:

Այսպիսի պոթկումներէն մէկու մը ընթացքին էր, որ Աղեփսանդրիոյ քրիստոնէայ ամբոխը անգլիոյն յօշոտեց այդ քաղաքի Նոր-պղատոնական դպրոցի "փառքը" համարուող հեթանոս կին-փիլիսոփայ Հիւպատիան, որ ծանչցուած էր ամէնքի կողմէ որքան մեծ մտաւորական, նոյնքան ալ առաքինի անձնաւորութիւն մը: Այնպէս որ քրիստոնէական կեանքը և մտայնութիւնը շատ քան կորսնցուցած էր իր մաքրութենէն, պարզութենէն և բարոյական բարձրութենէն (ողորմածութենէն):

Վրայ հասաւ Իսլամութիւնը և գրեթէ հաջուեյարդարի ենթարկեց ինքնավատնումով սպառած Արեւելեան քրիստոնէութիւնը՝ կրօնական կղզեակներ միայն ձգելով իր կազմած ովկիանոսին մէջ, ուր նախապէս կը ծաղկէին Քրիստոնէական Եկեղեցիի բարգաւաճ դաշտերը»--**Ճնորհի Արեւելիսկոզոս Գալուստեան**

Եկեղեցին չկրնար ըլլալ այն տեղը՝ ուր Քրիստոսի գիտութիւնը և Հոգին չկան: Եթէ մարդիկ հոգւոյ փրկութեան համար գործածեն այն հնարքը զոր անիրաւ տնտեսը գործածեց իր մարմնոյն պահպանութեան համար, որքա՞ն աւելի պիտի մեծնար Եկեղեցին:

Արեւելեան Եկեղեցին փոխանակ իր ոյժերը գործածելու

Աւետարանի տարածման՝ իր առաջնահերթ պարտականութեան, ինչպէս կ'ընէին Առաքեալները, ընդհակառակը ան կը վասնէր զանոնք յաճախ ամուլ և անիմաստ վէճերու:

Յիսուս նախաձայնեց և զգուշացուց Եկեղեցին ըսելով. «Ես եմ ճշմարիտ որթատունկը: «Եւ իմ Հայրս մշակն է: Ամէն ծիւղ, որ իմ վրաս է և պտուղ չի բերեր՝ Ան կը կտրէ զայն. իսկ այն ամէնը, որ պտուղ կը բերէ՝ կը յօտէ զայն, որպէսզի աւելի եւս պտղաբեր ըլլայ»--Յով. ԺԵ. 1-3: Հալածանքները երբեմն կտրատումի և երբեմն ալ սրբացումի դերը կատարած են աստուածաբանական վէճերուն մէջ:

Իսկ Արեւմտեան Եկեղեցին, ուշ միջնադարերուն, դարձած էր շատ նիւթապաշտ և իջխանապաշտ: Բողոքականութիւնը, յեղափոխութիւնը և ընկերվարական ջարժումները շատ բան խլեցին իր նիւթական հարստութենէն և աշխարհիկ իջխանութենէն՝ յօգուտ՝ իրեն:

Ռուսիոյ երբեմնի փառաւոր ու ճգնազգեաց Եկեղեցիին նուիրապետութիւնը 19-րդ դարէն մինչեւ քսաներորդի սկիզբները իջխանավայել կեանք ապրելու միայն տուած էր ինքզինքը և շատ քիչ կը մտածէր ուրիշ կենսական ու կրօնական հարցերու մասին:

Երուսաղէմի տաճարը (Եկեղեցին) որքան ալ հոգեպէս բլատակուած էր և առեւտուրի կեդրոն դարձած, Յիսուս չմերժեց և չուրացաւ զայն, այլ ջանաց դարմանել և մաքրագործել--Մարկ. ԺԱ. 17: Հակառակ վերոյիջեալ հանդուրժողութեան, Եկեղեցին հալածւեցաւ:

## **Հ Ա Ի Ա Տ Ա Լ**

### **ԵԿԵՂԵՑԻ՞Ց, ԹԷ ՅԻՍՈՒՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ**

Եկեղեցիին և Աւետարանին միջեւ եղած աղերսը: Այդ երկուքէն որո՞ւն պէտք է տալ նախապատուութիւնը: Եկեղեցւոյ ծոցին մէջ է որ երկնուած և մարմնաւորուած է Նոր Կտակարանը: Եկեղեցին է անոր մայրն ու դայեակը, բայց գերազանց զօրութենէ մը՝ Նախախնամութենէն է, որ Եկեղեցին ընդունած է Աւետարանը իր մէջ, որպէս իր կեանքի սկիզբը: Եկեղեցին է անոր պահպանը կամ պահպանակը, բայց, իր կարգին, Ա. Աւետարանն է որ ներուծած է տիեզերքին կեանքը: Անկէ բխած են այն բոլոր ներշնչումները, որոնք լեցուցած են Եկեղեցւոյ հոգեւոր մթնոլորտը:

Ինչպէս տերեւը չի կրնար գոյանալ առանց ծառի, ու ծառը չի կրնար ապրիլ առանց տերեւի, նոյնպէս Եկեղեցին և Ա. Աւետարանը չեն կրնար բացատրուիլ առանց մէկին և միւսին միանգամայն: Երկուքը մի մարմին են, գոր մարդ պիտի չկարենար բաժնել

իրարմէ: Երկուսին տարբերութիւնը սա է միայն: Եկեղեցին, ի՛նք եւս աստուածային յայտնութեան մէկ կերպը, կրնայ ժամանակին հետ ընդարձակել իր հոգեւոր փորձառութիւնը, նոր գլուխներ աւելցնելով իր գոյութեանը մէջ:

Աստուածաշունչը իր խորքին մէջ կը մնայ փակուած կնքուած յայտնութիւն մը, որովհետեւ զայն գրողները ապրած են հոգեւոր արարչագործութեան այնպիսի օրերու մէջ, որոնք ա՛լ չեն կրնար կրկնուիլ, ինչպէս չի կրնար կրկնուիլ Մարդեղութիւնը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի: Ա. Գիրքը, թէեւ կենդանի է և կենդանարար յաւէտ, սակայն գիրը՝ տառն է, իսկ Եկեղեցին, երբ Աստուած չէ դադրած ապրելէ անոր մէջ, չոգին է:

Ա. Մեսրոպ, Գողթնեաց գաւառին մէջ, որ իր գործունէութեան առաջին դաշտը եղած էր, իր իսկ խղճին մէջ զգացած էր կսկծանքը օտարալեզու պաշտամունքէն և Բարոզութենէն իրենց սրտին մէջ առանց հոգեւոր նորոգումի կայծ մը ընդունելու՝ անմխիթար մեկնող ժողովուրդին վիճակը: Առանց իմաստաւորելու հաւատքը՝ կրօնքը, մեռած ուժ մը, ու Եկեղեցին անիմաստ պերճանք մը պիտի մնային: Ա՛յս էր անտարակոյս Մեսրոպի համոզումը:

Մարդկութեան պարտականութիւնը ո՛չ թէ հաւատա՛լ է Եկեղեցիի մը կամ Աստուածաշունչի, այլ՝ Աստուծոյ խնդրածը մարդ արարածէն, Ջինք սիրել ու հաւատա՛լ է Իր հայրական ողորմութեան: Եկեղեցին և Աստուածաշունչը տեսանելի և ջօջափելի առարկաներ ու միջոցներ են, որոնք մեզ կ'առաջնորդեն դէպի Աստուած ու դէպի յաւիտենական կեանք:

Արուեստի և գիտութեան բոլոր զարդարանքները (պատկերներն ու Բանդակները) առարկաներ են տեսանելի ու ջօջափելի, որոնք միայն *օժանդակներ* ըլլալու են հաւատալու զԱստուած ու սիրելու Ջինք: Եկեղեցի մը դաստիարակելու է հաւատացեալները, որ չջփոթեն կրօնական միջոցները և օժանդակները հաւատքի նպատակին հետ: Յիսուս ըսաւ Մամարացի կնոջ. «Պիտի գայ ժամանակ, և արդէն եկած է, երբ ճջմարիտ երկրպագողները երկրպագութիւն պիտի ընեն չօրը՝ հոգիով և ճջմարտութեամբ, Բանի որ Հայրն ալ այդպիսի երկրպագութիւն կ'ուզէ Իրեն: **Հոգի է Աստուած, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ճջմարտութեամբ երկրպագութիւն ընեն**»--Յով. Դ. 25-26:

Դարձեալ, մեր Ազգային Եկեղեցիին պատմութենէն որոշապէս կը տեսնենք, թէ ութերորդ դարէն առաջ, պատկերներ չկային Հայոց Եկեղեցիներու մէջ, և թէ Տասներորդ դարուն անգամ, երբ Վահան Կաթողիկոս մը, Բիւզանդական Եկեղեցիին նմանութեամբ պատկերներ ջատցնել կը ջանայ Հայաստանի Եկեղեցիներուն մէջ, զինքը ժողովով վար կ'առնեն հայրապետական ամբողջն՝ ըսելով թէ

Հայաստանեայց Եկեղեցին կոստուսի դարձնել կ'ուզէ:

## ԵԿԵՂԵՑԻ ՅԱՃԱԿԵԼ

«Հոգածու ըլլանք իրարու հանդէպ սիրոյ և բարի գործերու մղելով զիրար: Բնաւ չդադրինք պաշտամունքի հաւաքոյթներուն մասնակցելէ, ինչպէս ոմանք սովորութիւն ըրեր են, ընդհակարակը, այդ ուղղութեամբ աւելի եւս յորդորենք զիրար, քանի կը տեսնենք թէ Տիրոջ Օրը կը մօտենայ»--Եբր.Ժ. 24-25:

Պօղոս նոյն ատեն կ'ուսուցանէ Տեղական Եկեղեցիներու կազմակերպութեան հանգամանքը, նպատակը, ձեւերը և անոնց ժողովումներու կարգն ու վայելչութիւնը: «Տէ՛ր թագաւոր, ըսաւ ան, արդարեւ Աստուծոյ Եկեղեցիին կը վայելէ հարուած ընդունիլ և ո՛չ հարուած տալ, բայց հաճեցէ՛ք յիջե՛լ՝ որ **Եկեղեցին մէկ սալ մըն է, որ իր վրայ ջատ կռաններ կոտրած է**»:

Ս. Մահակ Պարթեւ Հայրապետը իր կանոններուն մէջ կը գրէ. «Աստուծոյ պատգամները մեր առջեւ կը դնեն ոչ թէ պարզապէս քարերէ ու փայտերէ կտրուցուած շէնք մը, այլ հաւատքի հիմնավէմին վրայ շինուած *մարդոց սերունդ մը*: Հետեւաբար, ճշմարիտ հաւատքն է Եկեղեցին որ կը հաւաքէ կը շինէ Աստուծոյ Որդւոյն մէկ ներդաշնակութեան մէջ»: Ուրեմն, Եկեղեցին սոսկ կղերական դասակարգը չէ, հապա հաւատացեալներու միութիւնը: Մեծ Հայրապետը միեւնոյն նիւթին վերաբերմամբ քիչ մը անդին հետեւեալները կ'ըսէ. «Անխօս և անկենդան առարկաները չեն կրնար Աստուծոյ պաշտամունքին խորհուրդը արտայայտել, բայց միայն բաւաւոր եկեղեցին կրնայ զայդ ընել...»:

Եկեղեցին աղօթքի տունէն դուրս կը յատկանշուի գերազանցապէս իր բարոյական հեղինակութեամբ: Առաջին Դարերուն Եկեղեցին Ս. Հաղորդութիւն կը բաշխէր ամէն օր: Եկեղեցին ժամադրավայրն է, ուր Աստուած և մարդ կը խօսին իրարու հետ: Եկեղեցին՝ սեւեռակէտն է ազգի մը կրօնական ու պաշտամունքային կեանքին: Եկեղեցին *Ք'նչ*՝ մը չէ, այլ՝ *՛ո՛վ* է: Եկեղեցին կը տառապի, որպէսզի ծնունդ տայ նոր հաւատացեալներու:

Եկեղեցին՝ որպէս ժողովրդային հաւաք կամ համախմբում իր Տիրոջ Համբանալուն և Երկրորդ Գալստեան միջեւ գտնուող *իրականութիւնն* է: Չի բաւեր եկեղեցին ունենալ, պէտք է եկեղեցին *ապրեցնե՛լ*: «Եկեղեցիին ուղղուած քարոզութիւն մը իր մէջ ունենալու է **դատաստանի**՝ տարր մը, իսկ աշխարհի ուղղուած քարոզութիւնը՝ **սիրո՛յ** տարրը»: Աւելի խստօրէն քարոզելու ենք եկեղեցիին, սակայն աւելի գլխաւոր աշխարհի հանդէպ: *«Զանդի ժամանակն է որ դատաստանը Աստուծոյ տունէն սկսի»*--Ս. Պետ. 17:

Եկեղեցիին առաջնակարգ պարտականութիւնն է չափահասութեան առաջնորդել հաւատացեալը: Զրիստոսի Եկեղեցին չի կրնար մեծնալ խորքով և արժէքով պատահականօրէն կատարուող գործունեութիւններով: *«Աստուծոյ հօտը որ ձեր մէջ է, արածեցե՛ք վերակացու ըլլալով ոչ թէ ակամայ, հապա կամաւ, ոչ թէ անտակ ջանախնայութեամբ, հապա յօժարութեամբ»* --Ա. Պետ. Ե. 2, Մատթ. ԻԳ. 2:

Եկեղեցին վառարանն է աշխատութեան և ծառայութեան: Զրիստոսի Եկեղեցին Աստուծոյ խորհրդանիշն է երկրի վրայ: Եկեղեցին կանչուած է դառնալու ժողովուրդին խիղճը, ընկճըւածներու պաշտպանը Աւետարանի յաւիտենական Բարոզիչը և դժուարութեան ժամանակ միխիթարիչը: Անցեալին, Եկեղեցին պահեց ձայ ժողովուրդը Զրիստոնեայ, իսկ այսօր ձայ ժողովուրդը կը ջանայ պահել Եկեղեցին:

## **ԻՆՉ Է ԴԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ**

Եկեղեցին դիմագրաւելու է իր դժուարութիւնները ա՛յն լոյսով, որ Աստուած յայտնած է Յիսուսի կեանքին մէջ: Հաւատացեալը շարունակ վերադառնալու է Աւետարաններուն և ջանալու է ***Թափանցել Յիսուսի կեանքին:*** Առաքելական եկեղեցին կենսունակ աճում մըն էր *ջերմեռանդ, ազատ և անկախ:* Կարիք չունէր հաւատամքի կամ կանոնագրութեան Մինչեւ օտարամուտ վարդապետութիւններ:

Սկզբնական դարերուն եկեղեցին ընթացաւ ո՛չ թէ առաքելական ***յաջորդականութեամբ***, այլ առաքելական ***վկայութեամբ:*** Սկզբնական եկեղեցին ուներ երեք խորհուրդ՝ 1. Մկրտութիւն, Ա. Հաղորդութիւն և ապաշխարանք: Պօղոս կը հաւածէր Զրիստոնեաները, Յիսուս ըսաւ անոր. *«Ժնչու Յի՛ն կը հաւածես»: Յիսուս և Եկեղեցին նոյնացած կ'երեւին:*

***«Հայ եկեղեցին պէտք է երթայ ժողովուրդի՛ն և դառնայ եկեղեցի ժողովուրդով ժողովուրդին համար»***--Արամ Ա. Կաթ.

Եկեղեցին սրբանկարը դառնալու է Աստուծոյ, և արտայայտելու է Անոր նմանութիւնը հաւատացեալներու կեանքին մէջ:

**Վիճակագրութիւն 1992 թ. Գանատական եկեղեցի յաճախողներուն:**

--23 տոկոսը երբեք եկեղեցի չի յաճախեր:

- 11 տոկոսը ամիսը մէկ անգամ:
- 20 " տարին քանի մը անգամ:
- 7 " տարին գոնէ անգամ մը:
- 13 " եկեղեցական պատկանելիութիւն չունի:

Եկեղեցին պարզ կառոյց մը չէ, այլ վերացման խորհրդաւոր սրբավայր: Եկեղեցին ժողովուրդը պատրաստելու համար ի՛նք պէտք ունի պատրաստութեան: Այլապէս փղոսկրեայ աշտարակի բնակիչ կրնայ դառնալ ան: Այսօր հսկայ և գեղեցիկ եկեղեցիներ կը կառուցանենք, բայց մեր նախնեաց հաւատքը ունեցող ոչ կղերը և ոչ ժողովուրդը կը գտնես անոնց մէջ: Այսօր ինչ որ ազգապահպանում կ'ըսենք, բառ մըն է, մինչ ժողովուրդը կը կորսուի:

Եկեղեցիի խորհուրդէն բխած բարոյական ուժով և հաւատքի ներգործութեամբ ծառայելու ենք եթէ մենք զմեզ Զրիստոնեայ ըլլալ կը սեպենք:

Զրիստոսի Եկեղեցին Աստուծոյ ապրո՛ղ խորհրդանիշն է երկրի վրայ, ու կ'ուզէ տեսնել փոխակերպումը մեր անձնականութեան և անոր հոգեկան ըմբռնումներուն: Կազմակերպուած եկեղեցիները հեռացած կամ պարպուած են առաջնորդելու համար հաւատացեալները սոյն փոխակերպուած անեսական ապրումի: Զրիստոսի Եկեղեցիին, որ ծէնք ու մարմար ըլլալէ առաջ հաւաք ու միասնական հաղորդութիւն է, ծառայասիրութիւն, ու անձնանրւիրում:

Զրիստոսի հիմնած եկեղեցին մէկ է, սուրբ է, և ընդհանրական: Հաւատացեալներս այդ եկեղեցւոյ ամբողջութեան իւրաքանչիւր բարը կը կազմենք: «Որեւէ մէկ բար առանձին անգործածելի է և անիմաստ: Արժէք կ'առնէ այն ժամանակ միայն, երբ կառոյցին մէջ ըլլայ»--Խորէն Վրդ. Տողրամաճեան

Հաւատացեալ մը կարիքը ունի հոգեկան հասունութեան, եկեղեցին այդ լինելիութեան դայեակը և ստնտուն ըլլալու է: Հայ եկեղեցին դարեր ջարունակ եղած էր "հաւատքին միջնաբերդը", "Նոյեան տապանը", և հոգիներու Ծննդավայրը իր ժողովուրդին համար:

«Պօղոս առաքեալի գլխաւոր մտահոգութիւնը եկեղեցւոյ կեանքէն ներս բաժանումներն էին: Աստուածաբանական և սուրբ գրային սահմանումով չկայ և չի կրնար ըլլալ "մեր" կամ "ձեր" եկեղեցին: Ոչ ալ "ազգային եկեղեցի" որակումը կրնայ ջիտակ ըլլալ:

Եկեղեցին՝ տեսիլներու և ներշնչումներու գլխաւոր աղբիւրն է: Եկեղեցին ունի երկու նշանակութիւն, մէկը՝ Բարեղէն կառոյցն է, ուրկէ ներս կը մտնենք աղօթելու, միւսը՝ աւելի հոգեւոր իմաստ

ունի՝ «Եկեղեցին նոյն ինքն ժողովուրդն է»: Եկեղեցին ունեցաւ իր անժխտելի դերակատարութիւնը՝ վառ պահելու մեր հաւատքը մեծ եղեռնէն ճողոպրած ու աշխարհաձրի դարձած մեր գանգուածներուն:

Այն օրէն որ եկեղեցին լոկ ազգապահպանութեան և մշակութային հաստատութիւն նկատուեցաւ, դադրեցաւ գրեթէ մշակոյթ արտադրել: Մինչդեռ անցեալին գրեթէ մեր ամբողջ մշակոյթը կրօնական նկարագիր ունէր: Իսկ եկեղեցի մը երբ ծառայէ պետութեան մը աշխարհիկ շահերուն, կամ լծուած է կուսակցութեան մը տիրակալութեան, ան հասած կ'ըլլայ այլասերումի վտանգաւոր վիճակին: Եկեղեցի ըսուածը՝ *“Հաղորդութիւն Արքայ”* է: Եկեղեցիին պաշտօնն ու ձեռնարկը նուիրագործել և *սրբագործել* է հաւատացեալները: Յիսուս Իր *սրբութեան*, ոգեղնչեց առաքեալները: Եկեղեցին հաճելի ժամանցի տեղ չէ, ուր վայելքը ըլլայ գերագոյն նպատակը: Եկեղեցին ժողովուրդն է, եկեղեցականութիւնը՝ անոր սպասաւորութիւնը: Եկեղեցին Յարուցեալ Յիսուս Քրիստոսի նիւթեղէն Մարմինն է:

## **ԱՃԻԱՐՅ ԻՆՉՊԷՐՍ ԿԸ ԳԻՏԷ ԵԿԵՂԵՑԻՆ**

Եկեղեցւոյ **մեծագոյն կոչումը** սիրոյ գործունէութիւնն է՝ սպասաւորութիւն և ծառայութիւն: Դիմելու ենք գլխութեան Կատարելութեան: Յիսուս ըսաւ. *“չթա՛ծ եղե՛ք ինչպէս ձեռք երկնաւոր Հայրը”*--Մատթ.ԻԵ.34-40: Որովհետեւ սկզբնական Եկեղեցին գործօն գլխութեան և սիրոյ գաղափարով կապուեցաւ իր ջրջապատին և աշխարհի: Ամբողջ համայնքը մէկ ընտանիքէ կազմուած էր, որուն հայրը Եպիսկոպոսն էր: Ազգին ու եկեղեցիին ճակատագիրները միացուեցան և գոյատեւեցին հաւատացեալներու հոգիներէն ներս:

Ո՞ր է հայ հաւատացեալին նախանձախնդրութիւնը իր Մայր Եկեղեցիին հանդէպ այսօր:

Հայ արուեստագէտներ կը ճառեն Հայ Եկեղեցիին ճարտարապետական բացառիկ կառոյցէն, կուսակցականներ կը գնահատեն եկեղեցին պաշտպանող նահատակները, մտաւորականներ կը գովաբանեն եկեղեցական գրական աշխատանքները՝ բանաստեղծութիւն ու եկեղեցական ջարականներ, քաղաքագէտներ եկեղեցիներուն և խաչքարերուն ներկայութեամբ կը փաստեն հայկական ներկայութիւնը Թուրքիոյ մէջ:

***Բոլոր այս Հայ ներկայացուցիչները  
որքա՞ն հաւատք կ'ընծայեն Քրիստոսի  
Եկեղեցւոյ իսկութեան:***

Քրիստոնեութիւնը լոկ եկեղեցիին մէջ ցոյց տրուելի՛ք ցու-  
ցադրութիւն մը չէ, այլ առօրեայ կեանքի մէջ ապրուելի՛ք կենցաղ  
մը: Եկեղեցին՝ տեսիլներու և ներշնչումներու գլխաւոր աղբիւրն է:  
Եկեղեցին մարմնացումը դառնալու է Յիսուսի սպասաւորութեան:

«Եկեղեցին իր խորքով զուտ հոգեւոր, տիեզերական երեւոյթ  
մըն է, իսկ իր ձեւով՝ ազգային»--Վազգէն Ա. Կաթողիկոս:

«Եկեղեցիի մը առանձնական և հանրային կեանքը եթէ իր  
խոկումը չստանար Աստուծոյ խոկումէն միայն, և եթէ մի միայն  
հաւատքին ուժէն չէ որ հոն գործը կ'ընդունի իր արդիւնաւորման  
մղիչ զօրութիւնը, ամէն ինչ խաբուսիկ իրականութեան վրայ կը  
կանգնի անոր իրականութեան մէջ, ու սիրտը պատրանք է պատրանք  
կ'անցնի լոկ՝ ի վերջոյ կանգ առնելու համար ամենատխուր  
աւերակներու առջեւ»--Թորգոմ Արզեպս. Գուշակեան Պատրիարք  
Երուսաղէմի (1930-39):

*Իմ Եկեղեցիին Պատկերը կազմուած է ինծի պէս անձերէ --*

Կունենայ՝ Եթէ ես տամ:

Ընկերային է՝ Եթէ ես ընկերային եմ.

Քաղցր է՝ Եթէ ես քաղցր եմ.

Ներող է՝ Եթէ ես ներող եմ.

Առատաձեռն է՝ Եթէ ես առատաձեռն եմ.

Գործօն է՝ Եթէ ես գործօն եմ.

Փրկուած է՝ Եթէ ես փրկուած եմ.

Սուրբ Հոգիով լեցուն է՝ Եթէ ես լեցուն եմ.

Աղօթող է՝ Եթէ ես աղօթող եմ.

*Եկեղեցիս այն է՝ Ինչ որ եմ ես.*

### **Նաբեկ Հայ Եկեղեցի:**

Եկեղեցին հաւաք "հաւաքավայր" է ուր սուրբերը կը հաւաքուին  
ու կը հանդիպին և կը սրտակցին Աստուծոյ հետ: Հաւատացեալին  
ջանքն ու ձգտումը սրբութիւն, հոգիի մաքրութիւն և Աստուծոյ հետ  
հաղորդուիլ ըլլալու է--Ա. Թեա. Ե. 23, Հռոմ 2.19, 23, Թեա. Դ. 3,7, Ա.  
Կորնթ. Ա. 30,

Եկեղեցին հոգեղէն կառոյցով անպարտելի է ու անյարթաբա-  
րելի»--Ա. Ժայր. վարդ. Մարգիսեան: Եկեղեցոյ միութեան խորքը  
Քրիստոսի Անձն է: Եկեղեցին իրաւունք չունի իրեն պատեանին  
մէջ ամփոփուելու, ու լծանալու: Լծացումի և ինքնագոհութեան  
մտայնութիւնն է որ աւերներ կը գործէ ու մեր հաւատքը չ'աճիր:

Առաքեալներու ժամանակ *Քրիստոսապաշտութիւնն* էր որ կը  
տիրէր: Բայց երբ եկեղեցին դարձաւ ընկերային ու քաղաքական  
կեանքի գլխաւոր հիմնական ազդակը, ծնունդ առաւ *եկեղեցապաշ-*

*տութիւնը*. Այդ շրջանին՝ իրենց դերը կատարեցին եկեղեցին *ազգայնացնող* և *բարձրակարգացնող* ձգտումները, որոնք համաշխարհային բնույթ ունեին: Որոշ ժամանակ՝ եկեղեցիին մէջ տիրեցին *գրեթէ անտութիւն*, ու *տառապաշտութիւնը*, որոնց ծածկոցին տակ մնաց կենդանի Բրիտոս և Իր Աւետարանը: Հայ եկեղեցիներու միաբան աշխատանքը պէտք է ապահովէ արդի Բրիտոսապաշտութիւնը, հիմնուած լուսաւորութեան և գիտութեան վրայ:

Խորհուրդով Բրիտոսնեան կ'ապրի երջանկութիւնը Աստուծոյ Ներկայութեան: Հաւատացեալը կը մտնէ Բրիտոսի ամենամտերիմ և էական հաղորդակցութեան մէջ և հոն կը մնայ, կ'ամրանայ կը վայելէ հոգեկան շնորհներ: Աստուծոյ վսեմ Ներկայութիւնն ու անգերազանցելի սրբութիւնը կ'արտացոլայ Յիսուս Բրիտոսի մէջ որ կ'ակնկալուի նաեւ իւրաքանչիւր հաւատացեալէ:

«Աստուծոյ Ներկայութիւնը եթէ տեսած չես երկրի վրայ, երբեք պատեհութիւն չունիս տեսնելու նաեւ երկինքի մէջ»--Ռուս հոգեւորական մը: Կարելի չէ մէկ ոստումով բարձրանալ առ Աստուած ու զգալ Անոր հայրական և սրբազան Ներկայութիւնը: Ի՞նչ իմաստ ունի եկեղեցի երթալը և կամ աղօթելը առանց զգալու Աստուծոյ ներկայութիւնը: Բրիտոսի Մարմինն ու Արիւնը ճաշակողներու հոգիներուն մէջ կ'իջնէ Ինքն աստուածային Ներկայութիւնը զօրացնելու և ներշնչելու ենթական--Յով. Զ. 55-57: Ա. Հաղորդութեամբ հոգիներու միջեւ համագանգուած միութիւն մը կը ստեղծուի:

Երբ աղօթքը տիրական ներկայութիւն դառնայ, մեզ կը տանի առաւել աղօթքի՝ դէպի Աստուած: Մեր ինքնաբնականութիւնը պարտ ենք ընել Աստուծոյ առջեւ: Խիղճը Աստուծոյ Ներկայութիւնն է մեր հոգիներուն մէջ: Ներկայութիւն մը կայ թէ՛ մեր շուրջը և թէ՛ մեր մէջ, որուն Զօրութեամբ մենք թէ կը գոյատեւենք ու նաեւ յաղթական կ'ըլլանք: Եթէ Բրիտոս Աստուծոյ աջ կողմն է, ուստի մենք ալ Ա. Հաղորդութեամբ Աստուծոյ ներկայութեան կը վերանանք:

Հաւատքը գործօն դառնալու համար զգալու ենք Աստուծոյ գերադաս Ներկայութիւնը մեր մօտ: Ամբողջ կեանքը ինքնին հոգեւոր ճանապարհորդութիւն մը ըլլալու է, որպէսզի զԱստուած մեր մէջ դառնայ մնայուն Ներկայութիւն:

Եկեղեցին հոգեւոր կեանքի դպրոց մըն է, Բարոզիչը պիտի ջանայ հոգեւոր դաստիարակութեան ուսուցման գաղտնիքին տիրանալ և հոգիները առինքնելու, ներշնչելու և վերացնելու շնորհը ունենայ՝ իր նպատակին հասնելու համար:

# «ԻՍ ԿԵՐԱԿՈՒՐՍ՝ ԳՈՐԾԱԴՐԵԼ Է ԶԻՍ ՂՐԿՈՂԻՆ ԿԱՍՔԸ, ՈՒ ԿԱՏԱՐԵԼ ԱՆՈՐ ԳՈՐԾԸ

Կենդանական աշխարհի ամբողջ աշխատանքն ու մտահոգությունը կերակուրի համար է: Ինքզինք սնուցանելու համար է աշխարհի սկիզբէն ի վեր: Կարճ խօսքով՝ անձնասիրութիւն: Անձնասէրը, ընկերասէր չի կրնար ըլլալ: Անձնասէր գոյացութիւն մը միայն իր անձին շահով կը հետաքրքրուի: Անձնասիրութիւնը, մարդկային էակը անասնական գոյացութեան կ'իջեցնէ կամ կ'ենթարկէ: Ե՞րբ և ո՞ւր տեսնուած է կենդանի մը, որ իր ուտելիքը բաժնած է ուրիշի մը հետ: Ո՞ւր տեսնուած է անասուն մը, որ երկիրը մշակած է ինքզինք և ուրիշը կերակրելու համար:

Կենդանիները թռչունները և ձուկերն իսկ, իրարու բերնէն կը խլեն ու կը յափշտակեն ուտելիքնին: Երկրագունդին վրայ մի միայն մարդ արարածն է, որ անձնանուիրութեամբ ( devotional) հոգեբնծայութեամբ կ'ապրի և ուրիշներն ալ կ'ապրեցնէ: Ինչո՞ւ, որովհետեւ *«Միայն հացով չ'ապրիր մարդ, այլ այն ամէն խօսքով որ կ'ելլէ Աստուծոյ բերնէն»*--Մատթ. Գ. 3: Ինչպէս մայրութիւնը աւելի գոհացուցիչ է քան շուկայութիւնը, նոյնպէս ալ, Քրիստոնեայի մը համար, մտքով ու հոգիով պատրաստ ըլլալ անձնանուիրումի, կը նշանակէ կատարած ըլլալ Աստուծոյ կամքը, որ կը դառնայ իր կերակուրը:

Յիսուս իր առաքելութիւնը կը բացատրէ աշակերտներուն ըսելով. «Ես ունիմ ուտելիք կերակուր մը զոր դուք չեք գիտեր...Իմ կերակուրս այն է, որ գործադրեմ Ձիս Ղրկողին կամքը և լրումին հասցնեմ Անոր գործը», սակայն աշակերտները նորէն չեն հասկնար ու չեն իմանար--Յով. Գ. 32: Ինչո՞ւ, որովհետեւ աշակերտները մարմնական են, իսկ Յիսուսի խօսքերը հոգեղէ՛ն տարածք ունին: Սոյն պատճառաւ Մեր Տէրը կ'ըսէ իր աշակերտներուն. *«Նորք որ գայ ինձը՝ ճշմարտութեան Հոգին, ամենայն ճշմարտութեամբ պիտի առաջնորդէ ձեզ. որովհետեւ ոչ թէ ինձիմէ պիտի խօսի, այլ ինչ որ լսէ՝ գայն պիտի խօսի. և գայի՛ք բաներու մասին պիտի պատմէ ձեզի»*--Յով. ԺԶ. 13:

Ներկայ եկեղեցիները ի՞նչ թշուառ ու ողորմելի են: Իրենց մտածումը միայն մարմինը կշտացնելու կը ծառայէ, այսինքն՝ հիմնարկութեան քարն ու մարմարը, ներկն ու սրբանկարները, զարդարանքներն ու արտագին երեսոյթները, որովհետեւ անոնք մոռցած են, թէ իրենց կերակուրը Աստուծոյ կամքը կատարել ու

հաւատացեալները սրբութեան հասցնել է:

Եկեղեցւոյ արտաքին երեսոյթները՝ մարմնականի պահանջները ա՛յնքան անյատակ են և անիմաստ, որ դրամով ու նիւթականով չի գոհացուիր, հետեւաբար ան կը մնայ շարունակաբար ստացողի դիրքին մէջ, փոխանակ դառնալու հոգեւոր բարեաց տուիչը:

Քրիստոնէական առաջնակարգ ու տարրական հարցում մը. Յիսուս Քրիստոս, իր առաքելութեան համար Իր առաջին կեդրոնական գրասենեակը ո՞ւր հիմնեց: Մեր Տիրոջ հիմնարկութիւնը Բարէ ու մարմարէ կառոյց մը չէր: Յիսուս աշխատեցաւ մարդոց սրտերուն մէջ: Իր գրասենեակը մարդոց հոգիներուն մէջ հաստատեց: Ինչպէս չարերն ու դեւերը մարդոց միջոցով կը գործեն, Յիսուս եւս գործել սկսաւ ու տակաւին կը գործէ իր ծառայութեան նուիրուած և Զինք սիրող հաւատարիմ մարդոց միջոցով: Աչք ունեցող ու ճշմարիտը տեսնելու վարժ աչքեր, Կիրակի օրերը կը տեսնեն թէ եկեղեցին թափուր է մինչեւ Հոգեհոսանքի պահը ու միայն անկէ յետոյ է որ ժողովուրդը կու գայ եկեղեցի: Ինչո՞ւ: Պատասխանը, ընթերցողը ի՛նք թող տայ:

Քարաշէն եկեղեցիներու շինութիւնը սկսաւ Զորքորդ դարուն երբ արդէն քրիստոնեաներ իրարու մէջ բաժնուած էին ու ոմանք ալ գժտուած մէկզմէկու հետ: Յիսուս, ակնարկելով Հա՛յր Աստուծոյ, կ'ըսէ.

***“և լրումին հասցնեմ Անոր գործը”***

Աստուծոյ ամենակարեւոր և առաջաւոր գործը մարդ արարածը լրումի բերել է: Աստուած Ադամն ու Եւան ոչ թէ կատարեալ ստեղծեց ու վերջացուց, այլ՝ *սկսա՛ւ* շինել: Աստուած ինչո՞ւ չվերջացուց մարդ էակին շինութիւնը: Որովհետեւ Արարիչ Աստուած մարդուն “ազատ կամք” տուած էր, անոր շինութիւնը կը պահանջէր մարդ էակին մասնացիլն ու կամենալը իր Արարչին ծրագրին և ո՛չ աստուածային պարտադրութեամբ մարդ դառնալ: Ինչպէս որ Անտառակ Որդին, ինքզինքին գալո՛ւ վերադարձաւ հօրենական տուն և ոչ իր հօր պարտադրանքին զօրութեամբ, նոյնպէս ալ Աստուած կը սպասէ, որ մարդ էակ ի՛նք իր ազա՛տ կամքով վերադառնայ տուն՝ զինք սիրող երկնաւոր Հօր և յաւիտենական ժառանգութեան՝ փրկութեան:

Հեթանոս կրապաշտ Բուրմերն ու իմաստասէրները Բարոզեցին վախու և սոսկումի աստուածները, Մովսէս Բարոզեց նախանձոտ և վրէժխնդիր Աստուած մը: Հա՛յր Աստուած կը ջանայ բացատրել Իր մարդ արարածին, թէ Ինք սիրո՛յ Աստուածն է, սակայն Իր մարգարէներն իսկ չէին կրնար ըմբռնել թէ ինչպէ՞ս Արարիչ Աստուած մարդ էակը կը սիրէ, երբ Մովսէս պատմած է, թէ Աստուած նախանձոտ և վրէժխնդիր Արարիչ մըն է, ու Եդեմէն վտարած է Իր

հրաշագործ Ձեռքով ջինսած մարդ էակը...: Մակայն Մարմնացեալ ճշմարտութիւն ու Կեանք Յիսուս կ'ըսէ.

**«Մարդու Արդին Եկաւ փնտռելու և փրկելու  
կորսուածը»--Ղուկ. ԺԹ. 10:**

Յիսուսի սրբազան առաքելութիւնը փնտռել ու փրկել է կորսուած մարդկութիւնը: Ինչո՞ւ, որովհետեւ *«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Արածին Արդին տուաւ...»--Յով. Գ. 16:* Յիսուս Քրիստոս ամէն անգամ, որ մեղաւոր մը, անառակ մը ապաշխարութեան կ'առաջնորդէ, երկինքի մէջ հրեջտակներուն միջեւ ուրախութիւն և տօնախմբութիւն կ'ըլլայ--Ղուկ. ԺԵ. 10: Ուստի երբ Գալիլեացի Մարգարէն, Սամարացի կիներ դարձի բերաւ մօտակայ շրհորին մօտ, երկինքի մէջ Յիսուս մասնակցած եղաւ հրեջտակներու հանդիսական հիւրասիրութեան:

Մեւն էւս, որպէս Յիսուսի աջակերտներ երբ կատարենք մեզի ջնորհուած առաքելութիւնը անձնագոհութեամբ և հաւատարմութեամբ, կարծես կջտացած կը զգանք մենքզմեզ: Աշխարհ թող դիտէ՛ մեզ որպէս անարգուած, ծաղր եղած թշուառականներ: Մակայն իւրաքանչիւր Յիսուսի հետեւող աջակերտ, կանչուած և ընտրուած ներկայացուցիչն է արարի՛չ Աստուծոյ:

Միմոն և Անդրեաս, Յակոբոս և Յովհաննէս հանդիպեցան Յիսուսի, ճամբու մը վրայ: Մատթէոս նստած էր մաքսաւորի իր սեղանին առջեւ, երբ տեսաւ Յիսուսը: Ակնարկ մը, խօսք մը բաւական եղաւ, որ այս մարդիկը փոխեն իրենց կեանքի ուղղութիւնը: Այս մարդիկը տեսան Յիսուսը, չէին ճանչնար Ձինք՝ սակայն հետեւեցան Անոր առանց առարկութեան, բնական մղումով, խնդրութեամբ և սիրով: Յիսուս կը յայտնուի մարդոց ամէն տեղ, ամէն ժամ: Զսաներորդ Դարու մարդ, դո՛ւն ալ ճանչցիր Ձինք՝ դո՛ւն: Յիսուս կրնայ յայտնուիլ նաեւ իբր Մանուկ մը՝ մտուրին մէջ, իբր Ձափահաս մը, իբրեւ՝ մայթերու վրայ, անօթի, ծարաւ էակ մը կամ բանտարկեալ մը: Բա՛ց դուռդ, գործադրէ՛ Իր պատուերը:

Մաշտոց Աստուածաշունչը կը բերէր հայ ժողովուրդին, ո՛չ թէ գրականութեան ծառայելու համար, այլ լուսաւորելու իր ժողովուրդին ճամբան, յաւերժական աջակերտութեան ուղին: Բոլորանուէր անձնագոհութիւնը Յիսուս ուսուց որպէս աջակերտութեան գերագոյն նպատակ և հեռանկար--Մատթ. 2. 2-4

**Մարտ 16, 2001  
Թորոնթօ**